2026թ. օգոստոսի 04-ին ժամը 11:00-ին, թիվ ՍՆԴ/0756/04/24 սնանկության գործով կառավարիչ՝ Նարեկ Սարգսյանի կողմից «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ շենքում (ք. Երևան, Արշակունյաց 5, տարածք109) կանցկացվի սնանկ ճանաչված «ԿՈԻՐՈԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման համար գրավադրված, պարտապանին և երրորդ անձ գրավատուներին սեփականության իրավունքով պատկանող գույքերի վաճառքի աճուրդը բաղկացած 3 լոտից

Աճուրդի է ներկայացվում՝

ԼՈՏ-1.

Ենթալոտ 1. ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի քաղաքի Ալվանք գյուղից 4.7 կմ հյուսիս-արևմուտք գտնվող թիվ ՇԱԹՎ-29/188 /նախկին 14/504/ թույլտվությամբ օգտակար հանածոյի արդյունահանման /հանքային/ իրավունքը:

Գնահատված գինը՝ 2,144,000,000 ՀՀ դրամ

Ենթալոտ 2. ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի քաղաքի Ալվանք գյուղից 0.4 կմ հյուսիս-արևմուտք գտնվող թիվ ՇԱԹՎ-29/576 թույլտվությամբ օգտակար հանածոյի արդյունահանման /հանքային/ և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման իրավունքը:

Գնահատված գինը՝ 978,000,000 ՀՀ դրամ

Ենթալոտ 3. Թվով 79 շարժական գույքեր.

Հ/Հ	Ա նվա նում	Ք ա նա կ	Գնահատված արժեք ՀՀ դրամ
1.	Kamaz մակնիշի բեռնատար, 34NM418, կանաչ գույն, 1987թ., XTC43100H0033867, հենասարքի համար-0033867, հաշվառման վկայագիր KB246870	1	4 000 000ՀՀ դրամ
2.	Կոմպրեսորային կայան ПР-10	1	1 000 000
3.	Բուլդոզեր-Т170, տեխ վկայագիր Բ018576, ամրաշրջանակի գործ համար-Н74738, շարժիչ-12486/63	1	2 700 000
4.	Բուլդոզեր-Т170, տեխ վկայագիր Բ016318, ամրաշրջանակի գործ համար-Н65724, շարժիչ-D7904/330372	1	3 000 000
5.	Էքսկավատոր Hitachi 400LCH	1	26 600 000
6.	Թրթուրավոր էքսկավատոր Hitachi EX200	1	24 500 000
7.	Թրթուրավոր էքսկավատոր KOMATSU	1	15 400 000
8.	Քար մշակող, ձևավորող, մակերևույթը տաշող հաստոց HENG LJIIXE-	1	1 600 000
9.	Քար կտրող հաստոց-օգտագործված	1	1 500 000
10.	Քար կտրող հաստոց ճոպանով-DIAMOND SAWING MACHINE-DWS	3	30 600 000
11.	Քար կտրող հաստոց տ/հ	2	5 700 000

12.	Քարե սալիկների եզրերը կտրող հաստոց XING HUA MACHINERY-	2	3 000 000
13.	Մամլման եղանակով քարի ձևավորման հաստոց KINGSHUN-SY S150	1	3 600 000
14.	Մամլման եղանակով քարի ձևավորման հաստոց KINGSHUN-SY S90	1	3 000 000
15.	Քարմաղ KOBESH MACHINE-6X2 3DECKS	1	2 800 000
16.	Քար կտրող հաստոց քանդ JULUN-SQC/PC 1600S	1	6 700 000
17.	Քար կտրող սկավառակային հաստոց CEMAR-TMB 1600	2	15 200 000
18.	Քար հղկող հաստոց JULUN-SF2500	2	13 900 000
19.	Քար մշակող ձևավորող մակերևույթը տաշող հաստոց HENG LIJIXIE-	1	700 000
20.	Քար մշակող, ձևավորող, մակերևույթը տաշող հաստոց YUNFU YONGZHEN STONE MACHINERY-YZ1600	1	2 000 000
21.	ՔԹԾ-ով քարի փորագրման հաստոց JINAJN-NC M 1325	1	500 000
22.	Քար կտրող հաստոց HAINENG MACHINE-HQ600A	1	3 000 000
23.	Քար փայլեցնող հաստոց GUANHUA MACHINERY-YMY500	4	1 500 000
24.	Քար փայլեցնող հաստոց CEMAR-LMS 650 3C+8A	1	4 200 000
25.	Քար կտրող հաստոց քանդ-FTR600	1	5 400 000
26.	Քար հղկող և փայլեցնող հաստոց SHENG-DA MBJ600	1	2 200 000
27.	Քար տաշող փայլեցնող հաստոց SANFA-SJM 1800	1	3 900 000
28.	Քարի փորագրման հաստոց քանդ. JINAN JINGWEL –JW1520DA III	1	3 500 000
29.	Քար կտրող հաստոց WANLONG-QSQ 1600A	1	5 000 000
30.	Քար կտրող հաստոց քանդ XINDA-XDQJ 600(II)	1	2 600 000
31.	Քար կտրող հաստոց սկավառակ սղոցով-TJYH-1600/12	1	12 300 000
32.	Քար կտրող լրիվ ավտոմատ հաստոց-LCZQ-1600A	1	4 900 000
33.	Քար հղկող հաստոց HENZEL 200/1-LOFLER, HENZEL 200/1	1	2 500 000
34.	Քար հղկող հաստոց HENZEL 200/1-LOFLER, HENZEL 200/1	1	2 500 000

35.	Քար հոկող հաստոց 200/3-LOFLER, 200/3	1	6 000 000
36.	Քար հոկող ձեռքի հաստոց-Pilex	1	500 000
37.	Եզրահատող հաստոց D-500mm-LOFLER, D-500mm	1	2 400 000
38.	Եզրահատող հաստոց D-350mm, LCZQ-350A	1	700 000
39.	Քար կտրող հաստոց բազմաֆունկցիոնալ D-1300mm-		7 400 000
40.	Եզրահատող հաստոց D-600mm- LCZQ-600/4	1	4 600 000
41.	Գլխամասերը հատող /կտրող/ հաստոց D-600mm-LCZQ-600A	1	1 300 000
42.	Հղկող հաստոց 16 գլխիկավոր MKC OMC	1	16 400 000
43.	Քար կտրող հաստոց HJEGER SH200- 001	1	5 300 000
44.	Քար կտրող հաստոց երկտուպպոր D-2700, BISUPPORT-2700	1	11 600 000
45.	Ալմաստե ճոպանով քարհատ հաստոց-BI BIDESEMIPIANTI SANDRIGO-	1	9 200 000
46.	Քարամշակման հաստոց LUFTFER TYP FS1	1	3 200 000
47.	Քար կտրող /սղոց/ հաստոց D-3500, DIAKERS 3500	1	18 200 000
48.	Քար կտրող հաստոց D-2000, LCZQ-2000A	1	5 000 000
49.	Գլխամասերը հատող /կտրող/ հաստոց D-600mm, LOFLER, D-600mm	1	1 100 000
50.	Քարհատ հաստոցի սղոց D-3500	1	2 700 000
51.	Ալմաստե ճոպանով քարհատ հաստոց SPEED CUT 75	1	2 400 000
52.	Հորատող հաստոց SPEEDRILL-3	1	1 500 000
53.	Սղոցների զոդման հաստոց TJCJ28E	1	800 000
54.	Էքսկավատոր KOMATSU PC 400-8	1	39 800 000
55.	Տրակտոր T-330	1	15 100 000
56.	KAMAZ KS-55727 /kamaz-53229/	1	9 100 000
57.	FORD transit 2,5TD	1	1 400 000
58.	Բուլդոզեր KOMATSU D355-03	1	21 000 000

59.	Քար կտրող, մշակող, ձևավորող հաստոց D-4	1	1 400 000
60.	Քար կտրող սղոցային հաստոց GUANHUA MACHINERY XTJ 133 /D-		4 200 000
61.	Քար փայլեցնող հասցտոց XIA MEN 600 16 /HENGLIJIXIE/	1	3 200 000
62.	Քար կտրող սղոցային հաստոց թվային ծրագրով կառավարվող XIANDA CNFX-1400	1	2 800 000
63.	Քարհատ հաստոց D-600	1	1 100 000
64.	Ջրի պոմպ լրակազմ RITCHIE 8ROS	1	700 000
65.	Դիզելային էլեկտրոկայան ЖЭС 65кв	1	2 500 000
66.	Սղոց հաստոց	1	700 000
67.	Խառատային հաստոց 1k625	1	600 000
68.	Ֆրեզերային հաստոց 6Н-81Г	1	400 000
69.	Ուղղահայաց ծակող հաստոց	2	200 000
70.	Ֆրեզերային հաստոց 6М12Р	1	400 000
71.	Խառատային հաստոց 350ММ	1	500 000
72.	Լրակազմ տրանսֆորմատային ենթակայան КТП 630-10-04	1	600 000
73.	Քարհատ հաստոցի սղոց D-3000	1	400 000
74.	Զողող ագրեգատ САГ	1	100 000
75.	Զողող ագրեգատ 4 ելքով САГ	1	400 000
76.	Կոմպրեսորային կայան ПР-10	1	1 800 000
77.	Էքսկավատորի շերեփ 1.8մ3	1	400 000
78.	Բետոնե հենասյուներ 11,60մ	176	6 200 000
79.	Ալյումինե հաղորդալար АС35 25.300մ	1	10 500 000
	Ընդհանուր		**447,300,000**

Մեկնարկային գինը՝ 2.107.635.957 ՀՀ դրամ

ԼՈՏ 2. ՀՀ **Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Արաքսաշեն 1-ին թաղամաս, թիվ 2/16 հասցեում գտնվող անշարժ գույք: Գույքի նկարագրություն- Գնահատման ներկայացված անշարժ գույքը կառուցվել է 2600 քմ մակերես զբաղեցնող հողամասի վրա: Հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ Արդյունաբերական օբյեկտների:**

Անվանում	Վարչական շենք
Շենքի հիմքը	ե/բ
Շենքի պատերը	ե/բ սալեր
Տանիք	Հարթ տանիք առանց ծածկույթի, տանիքի վրա առկա է առանձին փոքր կառույց, որը նույնպես վնասված է՝ պատերի որոշ մասեր փլուզված են: Տանիքի վրա առկա են խոտեր և փոքր բուսականություն, ինչը ցույց է տալիս որ, խոնավության կուտակում է եղել
Արտաքին հարդարումը	Շինության արտաքին պատերի հարդարումը բացակայում է, պատերը ունեն անկանոն տեսք, պատերի հորիզոնական և ուղղահայաց միացումների հատվածներում նկատելի են ճաքեր և քայքայվածություններ
Միջհարկային բարձրությունը	Նկուղ = 2,2 մետր, մնացած բոլոր հարկերը = 3 մետր
Շինության հարկը	Նկուղ և վերգետնյա 4 հարկ
Շինության մակերեսը	1760,8 քմ
Դռներ և Պատուհաններ	Տեղադրված չեն
Ներքին հարդարումը	Ներքին հարդարման աշխատանքներ իրականացված չեն
Կոմունիկացիաներ	էլ.մատակարարում, ջրամատակարարում,

Մեկնարկային գինը՝ 91,348,803 ՀՀ դրամ

ԼՈՏ-3. Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի փողոց, թիվ 31 հասցեում հասցեում գտնվող անշարժ գույք: Գույքի նկարագրություն- անշարժ գույքը կառուցվել է 1330 քմ մակերես զբաղեցնող հողամասի վրա: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Անվանում	**Հասարակական տարածք**
Շենքի հիմքը	ե/բ
Շենքի պատերը	Տուֆ քար
Տանիքածածկը	Թերթաքար քառալանջ (շիֆեր)

Արտաքին հարդարումը	Շինության պատերը 3 կողմից շարված է սրբատաշ տուֆ քարով, մի կողմից տուֆ քար ցեմենտավազյա շաղախի կիրառմամբ: Շինության 4-րդ կողմի պատը՝ բակային հատվածը առանց արտաքին հարդարանքի: Բակային հատվածը գտնվում է՝ ոչ բարեկարգված վիճակում:
Միջհարկային բարձրությունը	Բոլոր հարկերինը = 3,0 մետր
Շինության հարկը	3 հարկ
Շինության մակերեսը	1217,5 քմ
Դռներ և Պատուհաններ	Մեծամասամբ տեղադրված են մետաղապլաստե դռներ և պատուհաններ, առկա են նաև սովետական արտադրության փայտե դռներ և պատուհաններ, որոնք գտնվում են մաշված, վատ վիճակում
Ներքին հարդարումը	***1*-ին հարկ՝** հատակը՝ մի մասը բետոնե մի մասը հողածածկույթ, պատերը և առաստաղը առանց արտաքին հարդարանքի: ***2*-րդ հարկ՝** առկա է ռեստորանային համալիր, որի գլխավոր մուտքը իրականացվում է փողոցի կողմից, տրավերտինով երեսպատված աստիճանավանդակներով, որոնց երկու կողմերից կառուցված են բազրիքներ նույնպես երեսպատված տրավերտինով: Ընդհանուր 2-րդ հարկի հատակը սալիկապատված է: Սրահի պատերը գաջասվաղված պատված ներկանյութով, իրականացված է կախովի առաստաղ: Խոհանոցի պատերի մի մասը սալիկապատված, մի մասը գաջասվաղված պատված ներկանյութով, առաստաղը նույնպես գաջասվաղված պատված ներկանյութով: Խոհանոցից ելք է ապահովված դեպի բաց հարթակ, որը ծառայում է որպես խոհանոցի մի մաս: ***3*-րդ հարկ՝** ընդհանուր պատերը գաջասվաղված են պատված ներկանյութվ: Միջանցքի և որոշ սենյակների հատակը մանրահատակ, իսկ մնացած սենյակներինը սալիկապատված, առկա են վնասված հատվածներ, գնտվում են գերմաշված, վատ վիճակում: Ներքին հարդարման վրա տարբեր գործոնների ազդեցությունից՝ խոնավությունից, ժամանակի գործոնից առաջացել են բազմաթիվ վնասված հատվածներ: Ակնադիտական եղանակով տեսանելի են ճաքեր՝ պատերի և առաստաղի վրա:
Կոմունիկացիաներ	Էլ.մատակարարում, ջրամատակարարում, կոյուղի,
Լրացուցիչ	Փողոցի կողմից՝ 09-005-0070-0018 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առկա է անմիջապես շենքին կպած կարգավիճակը չպարզված շինություն(ավտոպահեստամասերի խանութ): Տվյալ շինությունը գնահաշվարկներում չի ներառվել:

Մեկնարկային գինը՝ 71,744,535 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ 28.07.2026թ. ժամը 18:00 կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով:

Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարման անդորրագրերը, ֆիզիկական անձինք՝ նաև իրենց անձնագրի պատճենը, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերը՝ նաև իրենց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, հայտում պետք է նշվի հայտատուի էլեկտրոնային փոստի հասցե: Հանքային իրավունքների աճուրդներին մասնակցելուց առաջ հայտատուն պետք է ստանա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից թույլտվություն:

Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1 /մեկ/ տոկոսի չափով (բայց ոչ ավել, քան 300.000 ՀՀ դրամ), իսկ նախավճարը՝ 5 /հինգ/ տոկոսի չափով, մինչև հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն պարտապանի սնանկության հատուկ դրամային հաշվին՝ <ԱՄԻՕ ԲԱՆԿ> ՓԲԸ, հ/հ 1150008772472477, որպես ստացող նշելով պարտապանին:

Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման և աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի 16.06.2025թ. թիվ 374-Ն հրամանով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ: Հայտի ձևը, աճուրդի կանոնակարգը, հաղթողի կողմից ստորագրման ենթակա՝աճուրդի արդյունքների մասին արձանագրության օրինակը ազատ կարող եք ստանալ հետևյալ հղումով. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140258, կամ աճուրդի օրը՝ աճուրդի կազմակերպչից (սնանկության գործով կառավարչից)՝ աճուրդը սկսվելուց առաջ՝աճուրդի անցկացման վայրում:

Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը, որը լոտի վաճառքի գինը պարտավոր է վճարել աճուրդի օրվանից հետո՝տասնօրյա ժամկետում:

Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:

Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից 10 օրվա ընթացքում, աշխատանքային օրերին և ժամերին՝ դրա գտնվելու վայրում՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ:

Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող եք էլեկտրոնային փոստով nsbankcruptcy@gmail.com նամակ գրել սնանկության գործով կառավարչին կամ կապ հաստատել հետևյալ հեռախոսահամարով՝ 033 540 555: